

ԳԵՂԻ ԶՈՐԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐԶԱԳԱՆՔՆԵՐԸ

1919 թ. նոյեմբերի 20-ին Թիֆլիսում սկսվել էր Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների ղեկավարներ Ալեքսանդր Խատիսյանի և Նասիբ բեկ Ուսուբբեկովի խորհրդակցությունը, ուր քննարկվել էր Ձանգեզուրի շրջանում հայ-ադրբեջանական կռիվները դադարեցնելու հարցը: Նոյեմբերի 23-ին նրանք ստորագրել էին երկու երկըրների միջև հաշտություն ստեղծելու համաձայնագիր, որը, սակայն, մնաց թղթի վրա: Երկու օր անց ընդհարումները շարունակվեցին¹:

Նոյեմբերի 12-ին Օրդուբադի և Նախիջևանի թուրքերը հարձակվեցին Գողթանի շրջանի Բիստ, իսկ 25-ին Ռամիս, Նասրվազ, Ալահի գյուղերի վրա և, երկու օր տևած համառ մարտերից հետո, պարտություն կրելով, նահանջեցին²:

Նախիջևանի գավառում օսմանյան բանակից մնացած զինվորներից կազմված զորամասը, տեղի թուրքերի հետ, նոյեմբերի 25-ին հարձակում գործեց Սիսիանի շրջանի վրա: Նոյեմբերի 29-ին Սիսիանի վրա նոր հարձակում եղավ՝ այս անգամ Նախիջևանի թուրքերից կազմված զորքի կողմից: Երկու դեպքում էլ, հանդիպելով ուժգին դիմադրության, թշնամին քաշվեց ելման վայրերը³:

Ձանգեզուրի հարավ-արևելյան ռազմաճակատի /Կապարգողթի/ հրամանատար Գարեգին Նժդեհը ոչ մի հավատ չէր տածում Անդրկովկասում դաշնակից տերությունների ներկայացուցիչների «խաղաղարար» միջնորդությունների հանդեպ, առավել ևս՝ չէր հավատում, թե Ադրբեջանի կառավարությունը հանգիստ է ձգելու Ձանգեզուրը: Դրավկայությունը մուսավաթական զորքերի շարունակվող հարձակումներն

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 110, ք. 24, գ. 128, ք. 132, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 2-րդ, ք. 309-312, գ. 282, ք. 35-36, ֆ. 276, ց. 1, գ. 131, ք. 15, 88-91, 98-100, 103-108, 138, ֆ. 4047, ց. 1, գ. 521, ք. 1-2, Ա. Աստուածատրեան, Ադրբեջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, Հայրենիք ամսագիր, 1957, հոկտեմբեր, թիվ 10, էջ 50, Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէրոսք, 1968, էջ 197, Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 353-355, Է. Ձոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» /1918 թ. դեկտ. – 1920 թ. ապրիլ/, Եր., 2002, էջ 227:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, ք. 108, Ա. Աստուածատրեան, նշվ. աշխ., էջ 52, Ա. Վրացյան, նշվ. աշխ., էջ 358, Է. Ձոհրաբյան, նշվ. աշխ., էջ 231:

³ Տե՛ս Տիգրան Դեյեանց, Կենսքիս դրուագներից, Հայրենիք ամսագիր, 1945, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիվ 5 /250/, էջ 98:

էին գավառի վրա, Կապարգողթի թուրքերի և հատկապես Գեղի ձորի իսլամ բնակչության հայերի հանդեպ շարունակվող թշնամանքը, նրանց համառ անհնազանդությունը Ձանգեզուրի իշխանություններին:

1918 թ. հուլիսի վերջերին դեպի Ձանգեզուր արևմտահայ գաղթականների անցման և Նախիջևանի հայության փախուստի ժամանակ Գեղի ձորի թուրքերը նախճիրի էին ենթարկել նրանցից շուրջ 2000 հոգու¹: Դժբախտ փախստականների նկատմամբ իրականացրած այդ գազանային հաշվեհարդարի մխացող կսկիծը հանգիստ չէր տալիս Ձանգեզուրի հայությանը, որը, եթե հանդես չբերեր հարկ եղած համառություն և հերոսական խոյանքներով չհակադարձեր թշնամուն, ապա, անշուշտ, ենթարկվելու էր նույն անեղ ճակատագրին:

Գեղի ձորը դարեր առաջ եղել էր Սյունյաց Բաղաց իշխանների պատմական ոստանը, որը հետագայում աստիճանաբար զավթվել էր Ձանգեզուրի խորքերը թափանցած թուրքական ցեղերի կողմից: Հայկական գյուղերը դարձել էին թուրքական, բայց հարյուրամյակներ հետո էլ դրանցում մնացել էին հայկական մշակույթի բազմաթիվ հետքեր՝ եկեղեցիներ, գերեզմանատներ և այլն, իսկ շրջակա գյուղերի հայերի մեջ՝ անմար հիշատակներ²:

Այժմ ձորում կար 39 գյուղ, որոնցից 34-ը թուրքական էին և միայն 5-ը՝ հայկական: Չորս կողմից օղակելով հայկական գյուղերը, բարբարոս թուրքերը մշտական տազնապի մեջ էին պահում նրանց բնակիչներին: Կատարած գազանություններով ու թալանով ձորի ավազակաբարո, բնակչությունը միանգամայն հուսահատության դուռն էր հասցրել հատկապես Գենվազի /Մեղրի/ գյուղացիությանը³:

Սերտ կապեր ունենալով մի կողմից Նախիջևանի, մյուս կողմից՝ Ձանգեզուրի ու Ջեբրայիլի, իսկ երրորդ կողմից՝ Շխլարի վրայով նաև Հաջիսամլուի թրքության հետ, Օխչիի ձորի թուրք մասսան դարձել էր ծայրահեղ սանձարծակ և իր ասպատակությունները տարածում էր Կապարգողթից հեռու, նույնիսկ պատուհաս դառնալով Գորիսի շրջանի Տաթևի ենթաշրջանի, Սիսիանի Ղարաբասի ձորի և ընդհանրապես Սիսիանի հայության զլխին, ամտամեղի դարձրել նրա կյանքը: Ավազակախմբերը պարբերաբար բշում էին այս ու այն գյուղի ոչխարն ու տավարը, սպանում դաշտում աշխատող խաղաղ հայ մշակին, գերի վերցնում պատահական ճամփորդներին և ազատում մ-

իայն մեծ փրկագին ստանալուց հետո, առևանգել և գերի էին տարել նաև 40-ի չափ կանանց ու աղջիկների՝ անարգելով նրանց պատիվը¹:

Գեղվածորի թուրքերը հատկապես սանձարծակ էին դարձել աղբբեջանական թուրքերի պետության ստեղծումից, տաճիկական զորքերի Անդրկովկաս մտնելուց և Բաքվի հայության կոտորածից հետո: Նրանք խորապես համոզված էին, որ եթե ոչ այսօր, ապա վաղը իրենք Ղափանի և Գենվազի վրայով միանալու են Ադրբեջանին, որը Գեղվածորից հեռու էր ընդամենը 10 վերստով:

Թուրքերի ավազակությունները և կատարած նախճիրները հայերին ստիպում էին կռվող ուժերի մի խոշոր մասը հետ քաշել գավառի մյուս սահմաններից և գիշեր ու ցերեկ պաշտպանության տակ առնել ասպատակության տևական վտանգի ենթակա հայկական գյուղերը:

Հետախուզությունը հայտնել էր, որ Նախիջևանից Այրումի վրայով Գեղի ձոր են անցել մեծ թվով ասկյարներ ու սպաներ՝ նպատակ ունենալով հարձակվել ներքին Կապանի վրա²:

Ուրեմն, միայն զենքը կարող էր խափանել Գեղի ձորը Ադրբեջանին միացնելու դիվային ծրագիրը և վերջ դնել հայ խաղաղ բնակչության տառապանքներին:

Օխչիի ձորի հաղթանակից անմիջապես հետո /1919 թ. նոյեմբերի 15/ Նժդեհը նախապատրաստվեց իրականացնելու հարձակողական երկրորդ խոշոր գործողությունը: Հերթի դրվեց Գեղի ձորը թուրքերից ազատագրելու համար իր մշակած ռազմական պլանի կենսագործումը: Դրանով Ադրբեջանն ընդմիշտ կկորցներ այն հույսը, ըստ որի քանի ձորը ցեղակիցների ձեռքում է, Ձանգեզուրը վաղ թե ուշ կանցնի իր հսկողության տակ:

Ձանգեզուրի պետական կոմիսար Արսեն Շահնազյանը, որը նաև համատեղում էր զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը, 1919 թ. նոյեմբերի վերջերին մեկնեց գավառից: Նրա գնալուց հետո Ձանգեզուրի զինված ուժերի գլխավոր հրամանատար նշանակվեց Գեներալ-մայոր Ն. Ղազարյանը /Ղազարով/ ռազմական գիտելիքներով առանձնապես աչքի չընկնող, անգույն մի մարդ, իսկ, ՀՀ նախարարների խորհրդի դեռևս նոյեմբերի 8-ի որոշմամբ, Ձանգեզուրի պետական կոմիսարի պաշտոնին նշանակվել էր Երևանում Ձանգեզուրի ներկայացուցիչ Սերգեյ Մելիք-Յուլյանը, որը նոյեմբերի 26-ին հասնելով Գորիս, դեկտեմբերի 1-ին ստանձնեց իր պաշտոնը³:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 1, թ. 2, Ստեմել, Ձանգեզուրի հերոսամարտը եւ Արսեն Շահնազեան, Հայրենիք ամսագիր, 1963, փետրվար, թիվ 2, էջ 31, Վ. Առաքելյան, Նժդեհ, Եր., 1989, էջ 18, Գ. Նժդեհ, Հայ-բուլղարական կռիվները, Երկեր, հ. 2-րդ, Եր., 2002, էջ 47, նույն տեղում, Հրամաններ, կոչեր, էջ 415:

² «Արևոտ գիրք», հրատ. Լեռնահայաստանի կառավարության, Գորիս, 1921, էջ 29:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 53 շրջերես, Ա. Աստուածատրեան, նշվ. աշխ., էջ 50, Ա. Կրաջյան, նշվ. աշխ., էջ 355:

¹ Տե՛ս «Սյունիք /Գորիս/, թիվ 18, 1919, 23 մայիսի :

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թթ. 53 շրջերես, 56, Վ. Գեորգեան, Լեռնահայաստանի հերոսամարտը /1919 - 1921/, Եր., 1991, էջ 35, 36, Ա. Կրաջյան, նշվ. աշխ., էջ 353, Գ. Նժդեհ, Հրամաններ, կոչեր, նշվ. աշխ., էջ 423, Է. Ձուրաբյան, նշվ. աշխ., էջ 226:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 479, 2-րդ մաս, թ. 352:

իր պատրաստությունների և զեղիծորի գրավման վճռի մասին Նժդեիը հաղորդեց գեներալ Ղազարյանին և նրա հավանությունը ստանալով, սկսեց նախապատրաստական աշխատանքները¹:

Նենգ ու Ռխերիմ թշնամու դեմ արշավանքը Նժդեիը նախապատրաստեց խիստ գաղտնապահությամբ և ամենայն պատասխանատվությամբ: Հրամանատարը ելնում է նրանից, որ անբավարար է իր զորքի զինամթերքը և որևէ տեղից այն ստանալու որևէ հույս չկար: պակասում էր նաև զենքը. Կապարգողթի զորքը չուներ նույնիսկ մեկ հրանոթ: Ուստի Նժդեիը ռազմերթի ծրագրի հիմքում դրեց *հանկարծակի ու արագ հարվածով*, ամենասեղմ ժամկետում հաղթություն տանելու գաղափարը²:

Կատարված առաջին գործը եղավ *զինանոցի համալրումը*: Նախկինում պղնձահանքերում որպես պայթեցնողներ աշխատած և ուժակի գործածությանը քաջածանոթ 20 դակիանցի վարպետներ 10 օրում պատրաստեցին 1-ից 5 փթանոց մոտ 300 պայթուցիկ տակառ և 1-10 ֆունտ ծանրությամբ 1000-ից ավելի ձեռնառումք³:

Երկրորդ կարևոր գործը եղավ գայլախմբերի ստեղծումը:

Գայլախմբերի ստեղծման առիթը դարձավ այդ օրերին թուրքերի կողմից կատարված նոր ոճիրը՝ երկու հայ երիտասարդների գազանախին սպանությունը:

Նոյեմբերի 25-ին Նժդեիը վաշտապետերին ուղարկեց հետևյալ գրությամբ.

«Նկատում է, որ վերջին ժամանակներս թշնամին խոր եւ յանդուզըն խուզարկութիւններ է կատարում, ինչպես օրինակ՝ Վերին Խոտանանի դէպքը եւ Սիւնիքի մօտ մի վաչագանցու եւ ագարակցու սպանելը օրը ցերեկով: Թշնամին դորանով նախ մերկացնում է մեր դիրքերը և ուժերի դասաւորութիւնը ու միաժամանակ իր աւազակային խմբերով ահաբեկում է մեր ամբողջ հասարակութիւնը: Հրամայում եմ բոլոր վաշտապետներին՝ անմիջապէս ուղարկել ինձ մօտ երկուական աչքի ընկնող, կտրիճ տղաներ՝ գայլախումբերը կազմակերպելու համար»⁴:

Գայլախմբերը կազմակերպվեցին արագորեն՝ ընդամենը երկու օրում՝ նոյեմբերի 26-ին և 27-ին: Դրանք ուժանակներով և ռումբերով զինված քաջ երիտասարդներից կազմված խմբեր էին, որոնք զիշե-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, ք. 53 շրջերես, Ստեմել, Գարեգին Նժդեիը Ձանգ-եզուրում, Հայրենիք ամսագիր, 1963, յունուար, թիվ 1, էջ 19:

² Տե՛ս Գ. Նժդեի, Լեռնահայաստանի գոյամարտը, Եջվ. աշխ., էջ 21, Նույնի Հայրուշիկյան կռիվները, Նույն տեղում, էջ 46-47:

³ Տե՛ս Նժդեի, Կեանքն ու գործունեությունը, Եջխարներ, վկայություններ, Լուս Անջելես, 1989, էջ 318, Վ. Գեորգեան, Եջվ. աշխ., էջ 38, Վ. Առաքելյան, Եջվ. աշխ., էջ 18, Գ. Նժդեի, Հայ-բուլղարական կռիվները, Եջվ. աշխ., էջ 47:

⁴ Կարդան Գեորգեան, Եջվ. աշխ., էջ 38:

րային համարձակ գործողություններով պետք է սարսափ տարածեին թշնամու շարքերում: Նոյեմբերի 28-30-ին, երեք օր շարունակ, անցկացվեցին լարված ռազմափորձեր: Գայլախմբերի առջև խնդիր դրվեց՝ գործել այնպես, ինչպես գործում է թշնամին՝ անողոք ու վրեժխնդիր¹:

«Կռվի նախապատրաստման ընթացքում պետք էր տեսնել պ-րն Նժդեիի եռանդն ու անդադար աշխատանքը»², - այդ օրերին գրում էր ականատեսը:

Երբ արդեն պատրաստ էին պայթուցիկ տակառներն ու ձեռնառումբերը և կազմակերպված էին գայլախմբերը, Նժդեիը նոյեմբերի 30-ի առավոտյան արշավանքի պատրաստ վաշտերի հրամանատարներին ուղարկում է հետևյալ «Դիսպոզիցիան».

«Թուրք սպաների, ինչպես էդիֆ բեյի և ուրիշների ներկայությունը Գողթանում, Ադրբեջանի թելադրությամբ սրանց կազմակերպած հաճախակի հարձակումները Գողթանի և Սիսիանի հայ գյուղերի վրա, սրանց վերջին օրերի ընթացքում ցույց տված ակտիվությունը, երբ Ադրբեջանը կռիվ է սկսել Ձանգեզուրի դեմ, վերջապես սրանց պատերազմական գործողությունները Ձանգեզուրի թիկունքում՝ հայ տարրի բնաջնջմամբ Նախիջևանի և Ադրբեջանի միջև կապ ստեղծելու նպատակով, կրկնում եմ այդ բոլորը ստիպեցին Գեներալ-գի, Ղափանի և Տաթևի զորամասերին վերջ դնել Նախիջևանի նվաճողական ծրագրերին, այսինքն՝ մաքրել Գեղվա ձորը /որը այսօր թևավորում, դեպի իրեն է քաշում թե՛ Նախիջևանի և թե՛ բուն Ադրբեջանի ուժերը/ և, այդպիսով, միանգամ ընդմիջտ ապահովել Ձանգեզուրի հայության ֆիզիկական գոյությունը և խաղաղ կյանքը:

Մարտական լուրջ խնդիրը լուծելու համար հրամայում եմ.

1/ *Գեներալ-գի զորամասին*. իր ուժերի մի մասով /մոտավորապես 400 սվին/ գրավել Փիրմատան լեռնաշղթան /Օխչի գյուղից դեպի հյուսիս և զուգահեռ Օխչվա ու Գեղվա ձորերին/ և վճռականորեն գործել Գեղի և Փիրալու գյուղերի դեմ:

2/ *Ղափանի արևմտյան ուժերին*. բաժանվել երեք մասի և Եշանակված ժամին կենտրոնանալ Կոմբախի և Հալիծորի վրա, իր աջ զորաթևով գրավել «Չիման» կոչված բարձունքը ու այս բարձունքից դեպի արևելք ձգվող լեռնաշղթան և արագ հարվածով գրավել Շհարջիկ և Աջաղու գյուղերը:

Չախ զորաթևով գրավել Տունուս, Աջիշլու և Մուսալյան գյուղերը և անմիջապես կապվել Գեներալ-գի զորամասի հետ:

¹ Տե՛ս Նժդեի, Կեանքն ու գործունեությունը, էջ 86, 318, Վ. Գեորգեան, Եջվ. աշխ., էջ 39:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, ք. 53-ի շրջերես:

* Նախիջևանի երկրամասում մնացած տանկական զորամասերի հրամանատար:

3/ *Տաթևի զորամասին*. բռնելով Օղլան-Նիժա, Կիզիլ-Ղայա և Ազա-Պայա բարձունքները, ձախ զորաթևով գրավել Վերին և Ներքին Գերարա գյուղերը՝ կապ և կոնտակտ պաշտպանելով, ամբողջ ժամանակ, Ղափանի զորամասի հետ: Աջ զորաթևով գրավել Քիրսը և շարժվել Զիրիշի վրա:

Կռիվներին ձգձգվող բնույթ չտալու համար հրամայում են բոլոր զորամասերին իրագործել իրենց վրա դրած մարտական խնդիրներն առանձին վճռականությամբ ու արագությամբ:

Նույն նպատակով Տաթևյան զորամասի աջ զորաթևին և Գենվազի ձախին, թշնամու համար թողնել նահանջի ճանապարհ Աջիբաջով դեպի Նախիջևան:

Գեղվա ձորի օպերացիային մասնակցող բոլոր ուժերին խստորեն արգելվում է թալանը, հայ մարտիկի անունն արատավորող այդ ստոր երևույթը: Այդպիսիները տեղն ու տեղը կոչնչացվեն զնդացրային կրակով, առանց զինվորադաշտային դատարանի պատշաճ որոշման, որն արդեն նշանակված է իմ կողմից:

Գործողությունները սկսել միաժամանակ՝ դեկտեմբերի 1-ին, ուղիղ ժամը 6-ին:

Վիրակապական կետերը նշանակվելու են զորամասերի պետերի կողմից:

Կռվի առաջին օրը իմ դաշտային շտաբը գտնվելու է Հալիձորի բերդում, ուր զորամասերի պետերը օրական առնվազն երեք անգամ պետք է ուղարկեն հաղորդագրություններ:

Արտակարգ դեպքում հաղորդագրել վայրկյանաբար:

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատար՝ Նժդե:

30 նոյեմբերի 1919 թ.

Ղափանի հանքեր»¹:

Նույն օրը՝ նոյեմբերի 30-ին, Նժդեից հայտարարում է զորաժողով: Ժամեր անց Ղափանի վաշտերը, կազմ ու պատրաստ, հավաքվում են Հանքերում, Գենվազի վաշտերը՝ Բաղաբերդում, իսկ Ղարաբասի և Տաթևի ուժերը կենտրոնանում են Մալղաշում:

Նոյեմբերի 30-ի ամբողջ օրը զորամասերն անցկացրին ռազմափորձեր: Այդ օրվա երեկոյան դեմ Նժդեից Հանքերում իր զորքի առջև հանդես եկավ հայրենաշունչ, կրակոտ ճառով: Նա խոսում էր կատարվելիք արշավանքի նշանակության մասին: Վարդան Գեորգեանը վկայում է, որ հրամանատարը «Կը բացատրե թե ավարի և կողոպուտի տենչը չէ իրենցը այդ կռվին մեջ, թե յափշտակութեն և կողոպուտե բարձր նպատակ մը գիրենք կը տանի ռազմադաշտ, ուր

պիտի վճռուի այդ երկրին հարազատ զավակներուն ապրելու անկորնչելի իրավունքը: Հերոսներու անունով կ'զգուշացնե զորքին՝ ձեռք չբարձրացնել կիներու և երեխաներու վրայ»¹:

Մարտի գնալուց առաջ Նժդեին իր զինվորների հետ, որպես ուխտագնացություն, այցելում է Դավիթ Բեկի քաջ զորապետերից մեկի՝ Թորոս իշխանի շիրմին, որի շուրջը խռնված էր նաև մեծ բազմություն Ղափանի գյուղերից ու Հանքերից: Նա իր զինվորներին մի քանի դրվագներ է պատմում Դավիթ Բեկի գլխավորած հերոսամարտերից և իր մարտիկներին ու զանգեզուրցի կամավորականներին կոչ անում՝ երդվել հայոց նախնիների մեծագոր փառքով և մարտի նետվել տոգորված նրանց արիությամբ ու խիզախությամբ, թշնամու դեմ ատելությամբ առլեցուն, մեծ հաղթանակի նշանաբանով: Ապա Նժդեից հավաքվածներին զգուշացնում է, որ «եթե թշնամին տեր դառնա Սյունյաց բնական ամրություններին ..., ապա անվերապահորեն կարելի է ասել, որ նա առանց դժվարությունների պիտի վտանգի ողջ Ձանգեզուրը՝ Հայաստանի ուժեղ ողնաշարը»²:

Արշավանքից առաջ մի ուրիշ առիթով Նժդեից իր զինվորներին ասում է. «Գնում ենք մահ ու կենաց կռվի. գնում ենք միշտ առաջ և ոչ թե հետ նայելու... թող ձեզ հովանի լինի Սյունյաց քաջերի՝ Դավիթ - Բեկի, Մխիթար Սպարապետի փառքը, թող ձեր ոգին վսեմ ու վեհ լինի ձեր երկինքն մխրճվող լեռների պես... Ի զեն՝ հանուն հայության, հանուն զանգեզուրցու պատվի ու փառքի»³:

Հրամանատարի կոչին արձագանքում են նրա՝ հանուն հայրենիքի անձը զոհելու պատրաստ զինվորները:

Նույն օրը, ավելի ուշ ժամերին, արշավանքից անմիջապես առաջ, Նժդեից ժողովրդական զորամասերին ուղղում է թիվ 4 հրամանը.

«Հրաման Ղափան-Գենվազ-Տաթև զորամասերին:

Զորաշարքային մաս

թիվ 12

Ա.

Զինվորներ. Սկսվում է մեր արշավանքը, մեր խաչակրաց արշավանքը Գեղվա ձորի դեմ:

Վաղը, երբ ձեր խենթ գրոհներից և զարկերից թշնամին շշմած կթողնի իր գյուղերը, ձեզ կողջունեն մեր հինավուրց, այսօր թշնամու կողմից պղծված, բերդերի և վանքերի ավերակները:

Վաղը, երբ այդ ձորերում կլսվի ձեր ոտների ձայնը, ձեր զենքերի շայունը՝ հայ գերիները, Քեյբաշենի բեգերի շնաբարո կրքերի առարկան դարձած հայ կանայք ծնկաչոք կաղոթեն ձեր զենքի հաջողության համար:

¹ ՀԱԱ, ֆ. 128, ց. 2/3, գ. 98, թ. 8:

² Նույն տեղում, ֆ. 198, ց. 2/3, գ. 98, թ. 8:

³ Նույն տեղում, թ. 9:

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թթ. 56-57:

Վաղը, երբ քաջերդ Աջիբաշ հասաք, կհիշեք խալիլբեգյան սև օրերը, երբ այս գյուղի մոտ թուրքերը բարբարոսաբար մորթոտեցին երկու հազարի չափ, օսմանյան սրից ճողոպրած, հայ կին ու երեխաներ: Ասում են, այժմ այնտեղ մի ամբողջ ծոր լիքն է կմախքներով, գանգերով, ուր հաճախ հյուր են գալիս Գեղվա ծորի շեներն ու գիշատիչները:

Հիշեք այդ և եղեք անխնա ձեզ դիմադրողների դեմ, ասպետ և մարդ եղեք կանանց, երեխաների ու ծերերի նկատմամբ:

Ուրեմն առաջ, մեզ հետ Աստված և Դավիթ Բեկի վրիժակ հոգին:

Բ.

Ձորամասերի պետերին.

Կրակի մատնել, ավերել Փիրիլլուից դեպ արևմուտք գտնվող բոլոր գյուղերը: Մնացած գյուղերում հրդեհել միմիայն դարմանոցները և բեգերի տները: Գրոհների ժամանակ գործածել մեծ քանակությամբ ուժանակ և պայթուցիկ տակառ:

Նշանառությունը /сигнализация/ կատարել կարբիդային լամպերով, գունավոր խարույկներով և դիմամիտային փամփուշտներով:

Դափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատար Նժդե:

Դափանի հանքեր»¹:

Նոյեմբերի 30-ի գիշերվա ժամը 12-ին հնչում է շեփորի ձայնը: Ձորքը ոտքի վրա էր կազմ ու պատրաստ: Մեկ ժամ հետո զորամասերը շարժվում են և ժամը 4-ին գրավում իրենց հատկացրած դիրքերը՝ սպասելով հարձակման հրամանի²:

1919 թ. դեկտեմբերի 1-ի լուսաբացին, ժամը ուղիղ 6-ին, ստացվում է ընդհանուր հարձակման հրամանը: Ներքև նետված պայթուցիկ տակառի դղրոյունը հարձակման ազդանշան եղավ³: Գեղվածորի բարձունքները բռնած Դափանի վաշտերը նույն պահին սլացան առաջ:

Գեղվածորի արշավանքը սկսվեց այն ժամանակ, երբ, ինչպես ասվեց, Ադրբեջանի և Հայաստանի վարչապետերը դրանից մի քանի օր առաջ, նոյեմբերի 23-ին, դաշնակից տերությունների ներկայացուցիչների միջնորդությամբ ստորագրել էին խաղաղորեն ապրելու համաձայնագիր: Բայց Նժդեի հաշվի չառավ ոչինչ չասող, կողմերին որևէ բան չպարտադրող այդ փաստաթուղթը: Նա հայ զինվորական գործիչներից թերևս առաջինը և միակն էր, որը որևէ հավատ չէր ընծայում ոչ թշնամի թուրքին և ոչ էլ օտար «դաշնակցին»: Նա

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, ք. 55:

² Տե՛ս նույն տեղում, Նժդեի, Կեանքն ու գործունեությունը ..., էջ 86-87, 318, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 39-40, Գ. Նժդեի, Հայ-բուլղարական կռիվները, նշվ. աշխ., էջ 47:

³ Տե՛ս Նժդեի, Կեանքն ու գործունեությունը ..., էջ 87, 319, Գ. Նժդեի, Հայ-բուլղարական կռիվները, նշվ. աշխ., էջ 48:

հավատում էր միայն զենքին, նրա սկզբունքն անողոք ու անզիջում կռիվն էր, որ հայ ժողովուրդը պետք է ապավինի իր սեփական ուժերին, գիտակցելով, որ ինքը, թեև փոքրաթիվ, բայց հզոր է իր մտավոր, ֆիզիկական, ռազմագիտական ունակություններով:

Չնայած կռվի առաջին օրը, դեկտեմբերի 1-ին, թշնամին ուժգին դիմադրություն էր ցույց տալիս, բայց բոլոր տեղերում ընկրկում էր հայ քաջերի առաջ: Շալակով Կոմբախ լեռան վրա բարձրացած թնդանոթը կրակով ավերում էր ծորի Շհարջիկ, Աչաղու, Զիրս, Սանջիրախի, Չիրիշ և այլ գյուղերը¹:

Դեկտեմբերի 2-ին վաշտերն ուժգին գրոհով գրավեցին Շհարջիկը, բայց մյուս գյուղերը համառորեն դիմադրում էին: Երկրորդ օրվա արդյունքները նշանակալի չէին: Անհանգստացնում էր այն, որ ռազմամթերքը սպասածից արագ էր սպառվում, իսկ դեկտեմբերի 3-ին ուշացումով հանքեր հասած թնդանոթը, որ Նժդեի պահանջով Գորիսից ուղարկվել էր նոյեմբերի 26-ին, Գեղվածորի բարձունքներից մեկում տեղադրելուց հետո, երեք արկ արձակելով, շարքից դուրս եկավ²:

Ուստի կռվի ելքը պետք է վճռեին մարդկանց կամային հատկությունները, նրանց խիզախությունն ու անձնագոհությունը: Իրենց երկիրը պաշտպանող հայերը այդ բոլոր որակներով մեծապես գերազանցում էին թալանի ու արյան ծարավ թուրք ելուզակներին:

«Կռվի բախտը, - գրել է Նժդեի, - վճռում է թշնամի կողմերից մեկի բարոյական հավասարակշռության խախտումը: Սրան հետևում է անխուսափելի խուճապը: Իսկ այդ վերջինին՝ նյութական պարտությունը:

Անհավասար կռիվը չի կործանում այս կամ այն բանակը, այլ խուճապը, որին մատնված կողմը առնվազն եռապատկում է իր կորուստը, երբեմն էլ ոչնչանում իսպառ:

Սպանվածների, վիրավորների, գերվածների, ինչպես և պատերազմական ավարի քանակը եղել է և կմնա պարտության երկրորդական էլեմենտը:

Եականը՝ դա այն բարոյական ազդեցությունն է, որը ունենում է կռվող կողմերից մեկը՝ մյուսի վրա:

Ուրեմն հաղթելու համար պետք է բարոյապես ազդել գիտեմալ»³:

Ընդհանուր այդ դատողություններից հետո տարիներ անց վերհիշելով, թե զանգեզուրից մարտիկները ինչպես էին իրականացնում իր այդ պատգամները, Նժդեիը նշում էր.

«Իմ մշակած եւ գործադրած տակտիկական, գրեթե, միշտ էլ յաջողում էր, որեւէ տարեդային անակնկալով խախտել թշնամու հոգեբանական

¹ Տե՛ս Ստեմել, Գարեգին Նժդեիը Ձանգեզուրում ... էջ 19:

² Տե՛ս Նժդեի, Կեանքն ու գործունեությունը ..., էջ 320, Հայ-բուլղարական կռիվները, նշվ. աշխ., էջ 49:

³ «Արմուտ գիրք», էջ 30-31:

հաւասարակշռութիւնը, ապահովելով իմ մարտական յաջողութիւնը»¹:

Հայ վաշտապետերը և զինվորները մասսայաբար խիզախուժ էին, տալիս անզուգական հերոսութեան բազում օրինակներ:

Դեկտեմբերի 4-ին հայկական ուժերը նոր թափով շարունակեցին գրոհը: Գնդակների գնալով ուժեղացող տարափի տակ թուրքական զորամասերը սկսեցին երերալ: Դեկտեմբերի 5-ին հայերի ձեռքն անցան Բաղաբերդի բարձունքները: Թշնամու դիմադրությունը մեծապես թուլացավ: Հուժկու գրոհներով դափանցիները մեկը մյուսի հետևից գյուղերից դուրս էին մղում թուրքերին: Հաջորդ օրը թուրքերի նահանջը վերածվեց գլխակորույս խուճապի: Թշնամին մասսայաբար լքում էր գյուղերը: Հայ մարտիկները, ոգեշնչված մոտալուտ կատարյալ հաղթանակի հեռանկարից, անվրեպ ու անխնայ հարվածներ էին հասցնում թշնամուն: Կռվի 7-րդ օրը, դեկտեմբերի 7-ին, հայկական զորքը գրավեց թուրքերի վերջին գյուղը՝ Աջիբաշը: Զչերին հաջողվեց գլուխը փախցնել և ազատվել: Թշնամին կռվի դաշտում թողեց հարյուրավոր սպանվածներ, մեծաքանակ զենք ու զինամթերք²:

Հայերի կորուստները համեմատության եզրեր չունեին այն սակա կորուստների հետ, որ դեկտեմբերի 1-ից 7-ը կրել էին թուրքերը: Բայց դրանք ցավալի կորուստներ էին: Սպանվել էր շուրջ երկու տասնյակ երիտասարդ, ծանր վերք էր ստացել քաջ հրամանատար Գերասիմ Աթաջանյանը, վիրավորվել էին հինգ տասնյակից ավելի մարտիկներ: Նժդեհի կարգադրությամբ ծանր վիրավորներին շտապ տեղափոխում էին Հանքեր, որտեղ նրանց շրջապատում էին մեծ հոգատարությամբ: Ղափանի երկու հայտնի բժիշկներ, Գերմանիայում կրթություն ստացած վիրաբույժներ Միքայել Աթաջանյանը և Եգոր Անտոնյանը օր ու գիշեր հիվանդանոցում էին, ամեն ինչ անում էին, որպեսզի վիրավոր մարտիկները որքան հնարավոր է շուտ վերադառնան իրենց վաշտերը³:

Կապանցիների հաղթանակը կատարյալ էր: Գեղվածորի ողջ թրքությունը գաղթեց Նախիջևան: Ծորը նորից դարձավ հայկական: Ձանգեզուրի գեներալ-կոմիսար Սերգեյ Մելիք-Յուշյանի կարգադրությամբ ազատագրված գյուղերը հանձնվեցին Նախիջևանի և Բարգուշատի հայ գաղթականներին, որոնք և բնակություն հաստատեցին:

Գեղվածորի հաղթանակը Կապարգողթի հրամանատար Գարեգին Նժդեհի ռազմագիտական փայլուն տաղանդի դրսևորումն էր, նրա մտքի ու կազմակերպական անդադրում գործունեության արգասիքը:

¹ Վարդան Գեորգեան, Եզվ. աշխ., էջ 15:

² Տե՛ս Նժդեհ, Կեանքն ու գործունեությունը ..., էջ 88, Վ. Գեորգեան, Եզվ. աշխ., էջ 40, Գ. Նժդեհ, Հայ-թուրքական կռիվները, Եզվ. աշխ., էջ 52:

³ Տե՛ս Ստեմել, Գարեգին Նժդեհը Ձանգեզուրում ..., էջ 20, Նժդեհ, Կեանքն ու գործունեությունը ..., էջ 88:

Հենց այդպես էլ այդ նշանավոր հաղթանակն ընկալվում էր ինչպես ողջ Ձանգեզուրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Հաղթանակի հաջորդ օրը՝ դեկտեմբերի 8-ին, Ձանգեզուրի ազգային խորհրդի անդամ Սմբատ Մելիք-Ստեփանյանը Ղափանից հետևյալ երկտողն է ուղարկում Նժդեհին.

«Սիրելի Գարեգին,

Կատարածներիդ անվերջ շնորհակալություն: Կուզենայի այս պատմական օրերին գեղեցիկ յաղթական շարքերն այստեղ ընդունել և ապա վերադառնալ կենդրոն /ք. Գորիս: - Ա. Ս./»¹:

Վերադառնալով Հանքեր, Նժդեհը մի քանի օրից հետո անցնում է Մեղրի /Գեմվազ/, որի հայությունը մեծ խանդավառությամբ ողջունում է Կապարգողթի փառապանծ հրամանատարի մուտքը իրենց շրջան: Այդ խանդավառությունը և երախտագիտությունը արտահայտված էր Մեղրիի հայության անունից Եփրեմ Վարդանյանի կողմից Նժդեհին հղած հետևյալ գրության մեջ.

«Ողջունում ենք հաղթանակից հետո Ձեր կրկին այցը Մեղրիին, որի հարազատ զավակը լինելու բախտն ունիք: Ողջունում ենք Ձեր տարած հաղթանակն ու ասում. - Բարի գալուստ: Դուք, մեր ազգի սրբության զինվորներով, կատարեցիք մի մեծ պատմական ակտ. հոծ հայ բնակչության մեջ որպես մշտական արգելառիթ՝ թուրք ազգաբնակչությունից մաքրեցիք Օխչին և Գեղվածորը, ընդմիշտ ապահովելով հայերիս սպառնացող թիկունքը: Դուք ճշմարտացրիք մեր ամմահ ռազմիկ բանաստեղծ Ռ. Պատկանյանի

Աստված վկա, որ մենք կհաղթենք,

Թե մեկ անձնուրաց մարդ ունենայինք, խոսքը, և մեր ազգի անձնուրացներից մեկը հանդիսացաք այս արյունոտ օրերին:

Դուք բարձրացրիք հայ զինվորության ոգին ու նրա համբավը: Կեցցեք Դուք. կեցցեն Ձեր բոլոր զինվորները:

Մեղրի, 1919 դեկտ. 26

Ի դիմաց Մեղրիի հայության

Եփրեմ Վարդանյան»²:

Եթե Կապարգողթի հայերը, վերջապես, ազատվեցին Կապանի երկու ձորերի ավազակաբարո թուրքերի մշտական սպառնալիքներից և ազատ շունչ քաշեցին, ապա Ադրբեջանում երկար ժամանակ չէր դադարում մուսավաթականների աղմուկը հրապարակային ժողովներում, միտինգներում, թերթերի էջերում: Կառավարությունն օգտագործում էր ամեն առիթ դաշնակիցների մոտ Հայաստանին ներկայացնելու որպես ջարդարար պետություն, թեև Նժդեհը և Կապարգողթը, գործում էին միանգամայն ինքնուրույն:

¹ Վարդան Գեորգեան, Եզվ. աշխ., էջ 40:

² ՀԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 44, թթ. 2-3:

Վրաստանում Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Եվանգուլովը Երևան, իր կառավարությանը հաղորդում էր, որ Ադրբեջանի արտգործմինիստրությունը Վրաստանի իր դիվանագիտական ներկայացուցիչ Վեքիլովին հանձնարարել է դաշնակիցների հրամանատարությանը ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստերը և նրան պաշտոնապես բողոք ներկայցնել Ջանգեզուրում մուսուլմանների կոտորածի առթիվ, որին զոհ է գնացել ավելի քան 600 մարդ, իսկ հազարավորները միայն փախուստով են փրկել իրենց կյանքը¹:

Դեկտեմբերի 8-ին Ղարաբաղի նահանգապետ խոսքով բեկ Սուլթանովը Ադրբեջանի մինիստր նախագահ Ուսուբբեկովին հեռագրում է Գեղվաձորի գործողության մասին, նշելով, որ «խաղաղ բնակչությունը ի վիճակի չէ դիմանալ Ջանգեզուրի հայերի կանոնավոր զորամասերի հարձակմանը: ...Ջանգեզուրի մուսուլմանները խուճապով հեռանում են...»²:

Սուլթանովի հեռագրին հետևում է դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի արտգործնախարար Ջաֆարովի վճռական բողոքը Խատիսյանին³: Բողոքի պատճենը ուղարկվում է Հասկելին: Վերջինս այն ուղարկում է Խատիսյանին, իր կողմից ավելացնելով հետևյալը.

«Եթե այդ մեղադրանքները հետաքննությունից հետո հաստատվեն, ապա դրանք շատ ուժգին հարված կհասցնեն Հայաստանի ապագային: Եթե որևէ ռազմական ուժ է ուղարկվել Ջանգեզուր, շտապ հետ կանչեք և այդ մասին հաղորդեք ինձ»⁴:

Դեկտեմբերի 12-ին Խատիսյանը հեռագրով պատասխանում է Ջաֆարովին, նշելով, որ Ջանգեզուրում չեն եղել և չկան Հայաստանի հանրապետությունից ուղարկված կանոնավոր զորամասեր: Նույն օրը 23-ի համաձայնագրից հետո Հայաստանի կողմից որևէ ակտիվ գործողություն չի եղել: Սուլթանովի ցուցմունքը,- ասված էր հեռագրում,- հավանաբար Սիսիանի ուղղությամբ Նախիջևանին միանալու նպատակով հայերի կողմից թաթարների զինված ուժերի հարձակման կասեցման, ապա և ջախջախման արձագանքն է: Վերջում վարչապետն ավելացնում էր. «Հայաստանի կառավարությունը անկեղծորեն ցանկանում է և ձեռնարկում է բոլոր միջոցները նույն օրը 23-ի համաձայնագրի լիակատար պահպանման համար: Նա հավատում է, որ հայ-ադրբեջանական կոնֆերանսը կարող է փոխադարձ համագործակցությամբ լուծել Հայաստանի և Ադրբեջանի միջև գտնվող վիճելի հարցերը»⁵:

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 131, ք. 123:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, ք. 140:

³ Տե՛ս նույն տեղում, ք. 139:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, ք. 138:

Նույն օրը Սուլթանովը ինքն է Շուշիից հեռագիր հղում Հասկելին՝ դարձյալ բողոքելով Գեղի ծորում հայերի կատարած գործողություններից: Հասկելը նորից է հարցում անում Խատիսյանին, ավելացնելով, որ «այդ դեպքից կարող է ծագել մեծ պատերազմ երկու երկրների միջև՝ հարցականի տակ դնելով երկուսի ազգային անկախությունը: Անհրաժեշտ են ոչ թե խոսքեր, նոտաների փոխանակում, այլ անհապաղ խաղաղ աշխատանք տեղում»¹:

Հասկելի այս հարցմանը ևս Խատիսյանը նույն պատասխանը տվեց՝ Ադրբեջանը դիմել է հերթական սադրանքի:

1919 թ. դեկտեմբերի 13-ին Կոստանդնուպոլսում բրիտանական գերագույն կոմիսարը հեռագրում է Թիֆլիս, Անդրկովկասում բրիտանական ներկայացուցիչ Ուորդրոպին, պահանջելով հաղորդել վերջերս Ջանգեզուրում տեղի ունեցած իրադարձությունների, այսինքն՝ Գեղի ծորում իրականացված ռազմական գործողության մասին: Վերջինս դեկտեմբերի 14-ին հետևյալ հեռագիրն է հղում Երևան, արտգործնախարար Խատիսյանին.

«Կոստանդնուպոլսում բրիտանական գերագույն կոմիսարը ստացել է հեռագիր այն մասին, որ չնայած Ջանգեզուրը հայտարարված է չեզոք և այդ մասին նույնիսկ կնքված է ժամանակավոր համաձայնագիր /նկատի ունի նույն օրը 23-ի համաձայնագիրը: - Ա. Ս./, բայց հայերը գրոհել և ավերել են մի շարք ադրբեջանական գյուղեր: Բրիտանական գերագույն հրամանատարությունը, գտնվելով այդ ոչ բարենպաստ հաղորդման թողած տպավորության տակ, խորհուրդ է տալիս խուսափել ագրեսիվ գործողություններից և բարեխղճորեն հարգել ստորագրված համաձայնագիրը: Ես շատ ուրախ կլինեի, եթե Ձեր մինիստրությունը ինձ հնարավորություն ընձեռներ ապացուցել այդ լուրի անճշտությունը»²:

Հետևում է Խատիսյանի պատասխանը, որով նա, այս էլ քանիե-րորդ անգամ, ստիպված է լինում համոզել, որ Ջանգեզուրում չկան Հայաստանի հանրապետության զինվորական միավորներ, և որ տեղի ունեցածը հավանաբար եղել է սովորական ազգամիջյան ընդհարում³: «Այդ դեպքերը /Գեղի ծորը մոտ 40 թուրքաբնակ գյուղերից մաքրելը: - Ա. Ս./ Նորից բողոքի ու սպառնալիքի նյութ դարձան գեղ. Ռեյի և Ուորդրոպի /Ման/ Հասկելի: - Ա. Ս./ կողմից, - գրել է Ս. Վրացյանը: Ադրբեջանի կառավարությունը ցասկոտ հեռագրեր տվեց ու պատասխաններ ստացավ, բայց կյանքը գնաց իր ճանապարհով. Ջանգեզուրն այլևս մաքրված էր ներքին թշնամուց»⁴:

¹ "Борьба", N 287, 17 декабря 1919 г.:

² ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, ք. 143: Թարգմանություն անգլերենից:

³ Տե՛ս «Աշխատավոր», թիվ 267, 1919, 17 դեկտեմբերի:

⁴ Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 355:

Ձանգեզուրում պարտություն կրած Ադրբեջանը, քեմալականներին ունենալով թիկունքում, նաև փորձեր էր անում Հայաստանի դեմ պայքարում նոր դաշնակիցներ գտնել: Այդ նպատակով, կառավարության նախաձեռնությամբ և հրավերով դեկտեմբերի 15-ին Բաքու է ժամանում պարսկական կառավարության պատվիրակությունը և այնտեղ դեկտեմբերի 17-ին սկսվում է համատեղ խորհրդածոցով:

«Աշխատավոր» թերթը գրում էր, որ ադրբեջանա-պարսկական խորհրդածոցովից մուսավաթական կառավարությունը շատ բան էր սպասում: «Բանն այն է, որ եթե Հայաստանն ու Վրաստանը իրենց գլխավոր խնդիրն են համարում անկախության պահպանումը, ապա Ադրբեջանի հոգսը ուրիշներին պատկանող տերիտորիաներ զավթելն է: Նա երազում է իրեն միացնել նաև Պարսկական Ադրբեջանը: Այդ բանը շատ լավ է ըմբռնում պարսից կառավարությունը, ուստի Բաքվի պարսիկ-թուրք խորհրդածոցովի առիթով հայերը անհանգստանալու պատճառ չունեն, քանի որ այն հազիվ թե ունենա Ադրբեջանի համար դրական արդյունքներ, բայց հնարավորություն կտա պարզել երկու երկրների բնավ էլ ոչ բարեկամական փոխհարաբերությունները»¹:

Պարսկական կառավարությունը քաջատեղյակ էր օսմանյան թուրքերի կոտսեր եղբոր՝ Ադրբեջանի թուրքերի՝ Ձանգեզուրի և Արցախի հայերի-դեմ սանձազերծած կռիվների մասին: Նա նաև արդեն նկատում էր, որ ընդամենը մի քանի ամսվա պատմություն ունեցող Ադրբեջան անունը որդեգրած թուրքական նոր պետությունը, զնալով ծանր խնդիր է դառնալու իր համար:

Ձանգեզուրի դեմ չդադարող հարձակումների ընթացքում որևէ նկատելի հաջողության չհասնելով և մեծ կորուստներ կրելով, Ադրբեջանը նոր հալածանքներ սկսեց իր հպատակ հայ քաղաքացիների դեմ: Վրաստանում հայկական դիվանագիտական ներկայացուցչության ինֆորմացիոն բյուրոյի կողմից հրատարակվող բյուլետենում հաղորդմամբ իշխանությունները, առանց որևէ պատճառաբանությամբ փակեց բաքվում լույս տեսնող «Յառաջ» թերթը՝ Երևանի «Յառաջի» երկվորյակը և արգելվեց նրա վաճառքը²: Փակվեցին մի քանի հայկական դպրոցներ, աշխատանքից հեռացվեցին բազմաթիվ հայ ինժեներներ և տեխնիկներ նավթահանքերից ու գործարաններից, պետական հիմնարկներից վտարվեցին հատուկեմտ հայ պաշտոնյաները և այլն:

Որպես կանոն, ամեն մի արյունալի ոճրագործություն ծրագրելիս, բարբարոս Տաճկաստանի հարազատ ծնունդ Ադրբեջանը առիթը բաց

չէր թողնում վարպետորեն աղմուկ բարձրացնելու հայերի նախահարձակ լինելու կամ ինչ որ պայմանավորվածություն խախտելու մասին:

Գողթանում Ներքին և Վերին Ազուլիսների հայերն ընդունել էին Ադրբեջանի իշխանությունը և ապրում էին իբրև հպատակներ՝ կրելով Գողթանի մյուս գյուղերի հայ բնակչության նախատինքը՝ իբրև թուլամորթների և ստրուկների: Բայց դա էլ չփրկեց նրանց կյանքը:

Ազուլիսները 1919-ի վերջավորությամբ լիովին պաշարված, մատնված էին սովի և արդեն անխուսափելի էր նրանց կործանումը:

Նժդեհը որոշել էր իր ուժերով վերացնել թուրքերի կողմից Ազուլիսների պաշարումը, բայց Ձանգեզուրի դեկավարությունը մերժեց այդ առաջարկը այն պատճառաբանությամբ, թե պլեյի կարևոր է Բարգուլաշտի շղթայի ապահովության պահպանումը³:

Դեկտեմբերի 19-ին՝ Օրդուբադի և շրջակա գյուղերի թուրքերը մտնում են ներքին Ազուլիս և սկսում կոտորածը: Վայրենի խրախճանքին զոհ են գնում 400 հայ²: Բնակչության մի փոքր մասը, խուճապահար, կարողանում է փախչել և ապաստանել Վերին Ազուլիսում: Ներքին Ազուլիսը մինչև վերջին թելը կողոպտվում է:

ՀՀ վարչապետը այդ մասին տեղեկացնում էր Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին. «Հենց այժմ Գորիսից ստացել ենք հեռագիր հետևյալ բովանդակությամբ. «Մելիք-Մուսայան Աշուրը Ղափանից հաղորդում է, որ Օրդուբադի և Նախիջևանի թաթարները հրետանակոծությունից հետո կոտորել են [ներքին] Ազուլիսի ողջ խաղաղ բնակչությանը և այժմ շարունակում են հարձակումը Վերին Ազուլիսի վրա»³:

Այդ օրերին Վերին Ազուլիս է գալիս Էդիֆ բեյը և հայերին հավատացնում, որ պատահածը մի թյուրիմացություն էր, ուստի ոչ ոք թող երկյուղ չունենա: Հայտարարելով, թե թուրքերը միայն իր դիակի վրայով կմտնեն գյուղ, նա մեկնում է Օրդուբադ:

Կուրորեն հավատալով Էդիֆ բեյի խոսքերին, ազուլիսցիները ոչ գաղթում են հարևան Ցղնու գյուղ և ոչ էլ օգնություն են խնդրում Նժդեհի Գողթանի զորամասից: Ավելին, զորամասի հրամանատար Ղազար Քոչարյանը, ներքին Ազուլիսի ջարդից հետո, քանիցս դիմում է Վերին ազուլիսցիներին, որպեսզի թույլ տան գիշերով 200 զինվոր մտցնել գյուղ՝ պաշտպանելու բնակիչներին և բազա ստեղծելու Օրդուբադի դեմ գործողություններ սկսելու համար: Բայց պատասխանը միշտ լինում էր նույնը. «Դուք մեզ հետ գործ չունեք, մենք

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 2 և շրջերես, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 53 շրջերես, Գ. Նժդեհ, Հայ-բուլշևիկյան կռիվները, Եզվ. աշխ., էջ 52-53, նույն տեղում, Նամակներ, գրություններ, հեռագրեր, էջ 283:

² Նույն աղբյուրում՝ դեկտեմբերի 18-ին:

³ Տե՛ս «Սյունիք», թիվ 3, 1920, 15 հունվարի:

³ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 183, թ. 285:

¹ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 31, թ. 10:

² Տե՛ս «Слово», N 102, 17 декабря 1919 г.:

թուրքերի հետ ապրում ենք հաշտ ու խաղաղ: Մեր սիրելի եղիֆը խոստացել է մեզ պաշտպանել՝ ինչ գնով էլ լինի»¹:

Դեկտեմբերի 23-ին ագուլիսցիները տեղեկացան, որ թուրքերը պատրաստվում են շարժվել իրենց գյուղի վրա, թեև այնտեղ կային Ադրբեջանի ոստիկաններ: Հայերը դիմեցին Օրդուբադում նստող գավառապետ Աբասկուլի բեկ Թախրովի և այնտեղ գտնվող եղիֆ բեյի օգնությանը: Վերջինս Օրդուբադից գալիս է Վերին Ագուլիս, ուր գտնում է փառահեղ հյուրասիրություն: Նա նորից հանգստացնում է ագուլիսցիներին, որը և հանդիսացավ դիվային ծրագրի նախերգանքը:

Դեկտեմբերի 24-ին շրջակա գյուղերի թուրք բանդաները շրջապատեցին Ագուլիսը՝ սպասելով հրամանի: Գյուղի մեծերը նորից դիմեցին Օրդուբադ և այս անգամ գյուղ եկավ Աբասկուլի բեկը՝ մի քանի շեյխերով: Նրանք իջան եղիֆ բեյի մոտ և նրա հետ ունեցան խորհրդակցություն: Հաջորդ օրը Աբասկուլի բեկը վերադարձավ Օրդուբադ: Նա հեռացավ թե չէ, թուրք բանդաները և նրանց միացած ասկյարները խուժեցին Ագուլիս և սկսվեց սոսկալի կոտորած:

Երկու օր շարունակ ընկնում էին սրախողխող մարդիկ, բռնաբարվում էին կանայք ու աղջիկները, կողոպտվում ու ավերվում էր շեն գյուղը: Գեղեցիկ հասուներն ու աղջիկները առանձնացվեցին և լցվեցին հարեմներ: Գեղեցիկ օրիորդներից 20-ը, որպես նվեր, բաժանվեց սպաներին: Ունևոր Փանյանի 16-ամյա աղջկան նվիրաբերեցին եղիֆ բեյին:

Այսպիսով, երկու Ագուլիսներում տանջանքներով մեռավ 1400 հոգի, իսկ գյուղերը դադարեցին գոյություն ունենալուց²:

Ընկած ու անպաշտպան Ագուլիսում անասելի գազանություններ էին կատարում հատկապես Օխչի և Գեղի ձորերից Գողթան գաղթած թուրքերը: Հրաշքով փրկվածների մի փոքր մասը փախավ Չանգեզուր, մի ուրիշ աննշան մաս էլ փրկանքների գնով անցավ Արաքս գետը և հայտնվեց Թավրիզում³:

Այս ամենը տեղի ունեցավ բարբարոս Օրդուբադի կողքին, լկտի պաշտոնյաների աչքի առաջ:

Ագուլիսի կոտորածից հետո Գողթանի՝ հնարավոր ջարդի վտանգի ենթակա Գեազի, Ղաջանչի, Շուռութ, Փորադաշտ ու Ազա գյուղերի բնակիչները գաղթեցին Չանգեզուր: Գողթանի հայության գլխին կախվեց լիակատար ոչնչացման և հայոց պատմական այդ գավառակի ընդմիջտ կորստյան վտանգը⁴:

¹ Լույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 475, ք. 53-ի շրջերես:

² Տե՛ս «Սյունիք», թիվ 3, 1920, 15 հունվարի, Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 358-360, է. 2-րդ հրատարակում, նշվ. աշխ., էջ 234-238:

³ Տե՛ս Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 197, է. 2-րդ հրատարակում, նշվ. աշխ., էջ 240:

⁴ Տե՛ս նույն տեղում:

Կատարելով հերթական գազանային արարքը, Ադրբեջանը, ինչպես միշտ, առաջինը ինքը դաշնակիցներին բողոքեց՝ անմեղ հայերի արյունահեղության մեղքը բարդելով հայկական ուժերի վրա:

1920 թ. հունվարի 1-ին Լոնդոնի «Թայմս» թերթը Բաքվից ստացած հաղորդման հիման վրա տպագրել էր հողված այն մասին, որ Չանգեզուրի հայերը ներխուժել են Ադրբեջանի Ղարաբաղ պրովինցիան, գրավել և ավերել են մի քանի թուրք գյուղեր և սպանել թուրքերի:

Հայաստանի հանրապետության պատվիրակության ղեկավար Ա. Ախարոնյանը որոշ ժամանակ անց, գտնվելով Լոնդոնում, Բրիտանիայի արտգործմինիստրի տեղակալին հայտնում է, որ ինքը հեռագրով իր կառավարությանը այդ մասին հարցում է արել և պատասխան է ստացել, որ Բաքվից ուղարկված տեղեկությունը իրականությանը չի համապատասխանում¹:

Չանգեզուրի գեներալ-կոմիսար Ս. Մելիք-Յուլյանը ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Խատիսյանին /պատժենը՝ ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդանյանին/ 1920 թ. հունվարի 5-ին տված հեռագրով, նկարագրելով ագուլիսյան սարսափները, այնուհետև, գրում էր. «Չանգեզուրի հայ ժողովուրդը խորապես վրդովված և գրգռված է՝ պահանջում է ձեռք առնել ծայրահեղ միջոցներ... Ամերևակայելի դժվարություններով է հաջողվել ինձ, Ձեր հրամանների հիման վրա հանգստացնել հայ ազգաբնակչությանը»²:

Երբ թուրքերն արդեն կոտորել էին Ագուլիսի հայությանը, նրանց հետագա ոճիրները կանխելու համար, դեկտեմբերի 28-ին Նժդեհը Օրդուբադի ուղղությամբ կատարեց ռազմական ցույց և կանգնեցրեց թշնամու հարձակումները³:

Ագուլիսցիների կոտորածի և գողթանցիների մի մասի ստիպողական գաղթի համար թուրքերը Նժդեհից նոր պատիժներ պիտի սպասեին:

Գեղվածորի ռազմական հաղթանակից հետո Չանգեզուրի ղեկավարությունը ՀՀ ռազմական նախարարությանը խնդրում էր բարձրացնել Նժդեհի զինվորական աստիճանը իր կատարած ծառայությունների համար: Գրությանը կից ներկայացրած «Պարգևաթերթում» նա միջնորդում էր «կապիտան Գարեգին Տեր-Հարությունյանին – Նժդեհին» միանգամից շնորհել գեղապետի աստիճան, այդպիսով շրջան-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, ք. 141:

² «Սյունիք», թիվ 3, 1920, 15 հունվարի:

³ Տե՛ս Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 361, Ռ. Համբարձումյան, Վարք Նժդեհի, Եր., 2001, էջ 63: * Պատմագիտական հետազոտություններում /տես, օրինակ, Ավո, Նժդեհ, Պլյուրոս, 1968, էջ 79, Նժդեհ, Կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ, Լոս Անջելես, 1979, էջ 218, R. Ovanisian, The Republic of Armenia, vol. 2, 1979, էջ 218/ սխալմամբ նշված է, թե երևանից Նժդեհը Չանգեզուր էր եկել փոխգնդապետի աստիճանով: Ինչպես երևում է վերը բերած արխիվային փաստաթղթից, այդ ժամանակ նա կապիտան էր:

ցելով փոխգնդապետի աստիճանը¹:

Գեղվածորն ընկնելուց հետո, Նժդեհը պատրաստվեց անմիջապես գործողություն սկսել *Օրդուբադի* դեմ:

Օրդուբադի բնակչությունը արդեն խուճապահար փախել էր տարբեր ուղղություններով: Բայց չգիտես ինչու գեմ. Ղազարյանը Գորիսից հրամայել էր այլևս ոչ մի քայլ առաջ չգնալ, միաժամանակ պահանջել էր թնդանոթները վերադարձնել նշանակված վայրերը², որովհետև թընամին նոր ուժեր է կուտակում Ջանգեզուրի սահմանների վրա՝ գավառի արևելքից Գորիսի, իսկ Նախիջևանի ու Մինքենդի կողմերից՝ Սիսիանի վրա հարձակվելու համար:

ՀՀ ներքգործնախարարին Ջանգեզուրի պետական կոմիսար Ս. Մելիք-Յուլյանը դեկտեմբերի 25-ին գրում էր. «...Ամբողջ Ջանգեզուրը շրջապատված է թշնամիներով. մեր հետախույզ մասերը սահմանագծերում միշտ հանդիպում են թշնամիներին: Աշխատում ենք ստեղծել այնպիսի սահմաններ, որոնք՝ հնարավորություն կտան ընդհարումների դեպքում հեշտությամբ պահպանել երկիրը»³:

1919 թ. դեկտեմբերի վերջերին Հայաստանի զինվորական նախարար գեմ. Արարատյանի հրամանով Դրաստամատ Կանայանը /Դրո/ նշանակվեց Ջանգեզուր-Ղարաբաղի ընդհանուր հրամանատար⁴: Անվճռական գեմ. Ղազարյանի կարևորագույն կարգադրությունները այսուհետև համաձայնեցվելու էին հանդուզն ու խիզախ Դրոյի հետ:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 479, մաս 2-րդ, թ. 353-ի շրջերես:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 44, թթ. 2-3:

³ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 54:

⁴ Տե՛ս Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 394, Դրո, կենսագրական, հուշեր, վկայություններ, եր., 1991, էջ 138: